ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՊՈԱԿ

<<ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ОВ.ТУМАНЯНА>>ГНО МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА

✉ ք. Վանաձոր,Տիգրան Մեծի 36
☎ /0322/ 4-63-87
Fax /0322/ 4-18-56

թիվ 1 որոշման
<<16>> հունիսի 2014թ.

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/2>> ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՎՊՀ ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու՝ԳԱԿ-ի և Ձեր միջև 2011-2014թ.-երին կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրում նշված ապրանքները: Ապրանքների մատակարարման պայմանները սահմանվում են կից ներկայացվող պայմանագրի նախագծով:

Մասնակիցը կարող է հայտ ներկայացնել ինչպես մեկ չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար:Գնային առաջարկը յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացվում է մեկ միավորի թվով: Մասնակցի կողմից առաջարկվող գինը ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց արժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով: Հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36 հասցեով,վարչական մասնաշենք,ընդհանուր բաժին մինչև 2014 թ. հունիսի 27-ի, ժամը 11:00:

Հայտերը կբացվեն ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36 հասցեով,վարչական մասնաշենքում, 2014թ. հունիսի 27-ին, ժամը 11:00:

Գնման նախնական պայմանագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՇՀԱՊՁԲ 11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

էլեկտրոնային փոստի հասցեն gnumner@vspi.am:

Առդիր՝ 17 թերթ:

ՎՊՀ-ի ռեկտոր՝ Գ.Խաչատրյան

Կատարող՝ Գնումների համակարգող
☎ 094007607

Հավելվածթիվ 1
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<< ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ 11/2-14/4>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____Հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____-ի կողմից N_____ծածկագրով

Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժնին(չափաբաժիններին)

չափաբաժնի (չափաբաժինների)համար

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով(կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝_____:

Ընթացակարգիի մասնակցի անվանումը (անունը)

_____

_____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, անուն,ազգանունը) (Ստորագրությունը) Կ.Տ.

՛___՝ _____2014թ

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/2>> ծածկագրով
ընթացակարգի հրավերի
<< ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ 11/2-14/4>> ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված **<<** ----------**>>** ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ---------- առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1		*3*	*4*	*5=3+4*

***3-րդ սյունակում նշված <<Արժեքը>> ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ՄՆՆԴԻ
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎՊՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-14/4

ք. Վանաձոր **<<___>>_____**

Վանաձորի պետական համալսարանը, (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս ռեկտոր Գ. Խաչատրյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<-- >> -ն, (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս ---- , որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված սնունդ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված ստանդարտին չհամապատասխանող Ապրանք.

ա) Պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) Չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը :

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամագիրը (Համաձայնագիրը).

3.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները,

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին և Համաձայնագրերին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Սույն պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 1.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Սույն Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **(----) ՀՀ դրամ:** Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն պայմանագրի

անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածում: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Գնի ցանկացած փոփոխություն իրականացվում է միայն կողմերի համաձայնությամբ:

4.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում, իսկ դեկտեմբեր ամսում մինչև 25-ը), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է սույն պայմանագրում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Համաձայնագրերով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.4 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,05%-ի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև -
--- -ը:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների

քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

9.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Գնորդի համաձայնությամբ:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա) Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ) եթե դա Գնորդի գործողության կամ անգործության հետևանք չէ:

9.4 Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Գնորդը պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

9.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ	Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

Հավելված թիվ 1
<<>> ------2014 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/2-14/4>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Սնունդ

հ/հ	Գնման առարկայի անվանում	Տեխնիկական ցուցանիշներ	Չափման միավոր	Քանակը	Մատակարարման ժամանակացույց
1	հաց	Մատնաքաշ, ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված, ՀՍՏ 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %, քաշը՝ 550գր:	հատ	430	Հուլիսի 3-17 ամենօրյա
2	լավաշ	Ցորենի ալյուրից թողարկված, փաթեթավորված 1-ին տեսակի ալյուրից, ՀՍՏ 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Տուփում 10 հատ	տուփ	15	Հուլիսի 17
3	պանիր	Չանախ: Սպիտակ աղաջրային պանիր, կովի կաթից, 36-40% յուղայնությամբ ԳՕՍՏ 7616-85 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	30	Հուլիսի 3 – 10կգ Հուլիսի 7-ին 10կգ Հուլիսի 12-ին 10կգ
4	սոխ	Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	15	Հուլիսի 3- 8կգ Հուլիսի 10-ին 7կգ
5	կարտոֆիլ	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Միջին չափսի:	կգ	80	Հուլիսի 3-ին 30կգ Հուլիսի7-ին 25կգ Հուլիսի 12-ին 25կգ
6	կանաչի	Կանաչի սամիթ և համեմ, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և	կապ	20	Հուլիսի 3-ին 5կապ Հուլիսի 6-ին 5կապ Հուլիսի 10-ին

		«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի			5կապ Հուլիսի 14-ին 5 կապ
7	տավարի միս	Աղացածմիս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 °C -ից մինչև 4 °C ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ՀՍ 342-2011:	կգ	45	Հուլիսի 3-ին 17.5 կգ Հուլիսի7-ին 10կգ Հուլիսի 14-ին 7.5կգ Հուլիսի 16-ին 10կգ
8	խոզի միս	Աղացած խոզի սալ,թարմ: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-իN 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	Հուլիսի 3-ին 3.5 կգ Հուլիսի14-ին 3.5կգ Հուլիսի 16-ին 3կգ
9	շաքարավազ	Ճակընդեղից, սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, ԳՕՍ 21-94 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս	կգ	33	Հուլիսի 3-ին
10	բրինձ	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%, ԳՕՍ 6293-90: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.	կգ	23	Հուլիսի 3-ին
11	վերմիշել	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ԳՕՍ 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	10	Հուլիսի 3-ին
12	ձավար	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	20	Հուլիսի 3-ին
13	ոսպ	Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի:	կգ	15	Հուլիսի 3-ին

		Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:			
14	հնդկաձավար	Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջներ ի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %	կգ	12	Հուլիսի 3-ին
15	մակարոն	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ А (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), В (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ГОУС 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	10	Հուլիսի 3-ին
16	գարուխ	Գարուխ ГОУС 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	Հուլիսի 3-ին
17	սիսեռ	Սիսեռ ГОУС 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	5	Հուլիսի 3-ին
18	լապշա	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ А (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), В (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ГОУС 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	5	Հուլիսի 3-ին
19	սպագետի	Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ А (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), В (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման, ГОУС 875-92 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, ռուսական արտադրության կամ համարժեք	տուփ	12	Հուլիսի 3-ին
20	կարագ	Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով, ГОУС 37-91 կամ համարժեք: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված: Զելանդական կամ համարժեք, 1 կգ սալիկներով :	կգ	22	Հուլիսի 3-ին 11կգ Հուլիսի 10-ին 11 կգ
21	ձեթ	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, ГОУС 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի,1 լիտրանոց:	լ	41	Հուլիսի 3

22	վարունգ	Վարունգ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	45	Հուլիսի 3-Հուլիսի16Ամենօրյա
23	լոլիկ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	50	Հուլիսի 3-Հուլիսի16 Ամենօրյա
24	պղպեղ	Քաղցր: Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	Հուլիսի12-ին
25	սմբուկ	Սմբուկ թարմ, ԳOUS 13907-86: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	10	Հուլիսի12-ին
26	կաղամբ	(ԳOUS 26768-85) 55% -վաղահաս, 45%- միջահաս Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև կանաչ և սպիտակ տերևների խիտ մակերեսը: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, ցրտահարված գլուխների մթերումը չի թույլատրվում: Մաքրված գլուխների քաշը ոչ պակաս - 0.7 կգ	կգ	45	Հուլիսի 3-ին 20կգ Հուլիսի7-ին 10կգ Հուլիսի 12-ին 25կգ
27	գազար	Սովարական և ընտիր տեսակի, ԳOUS 26767-85: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	5	Հուլիսի 3-ին
28	բազուկ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%:	կգ	5	Հուլիսի 3-ին
29	կանաչ լոբի	Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	50	Հուլիսի 5-ին 25 կգ, Հուլիսի 12-ին 25կգ
30	աղացած սև պղպեղ	Համեմունք աղացած, խոնավությունը՝ 12%-ից ոչ ավելի, եթերային յուղերը՝ 0.8%-ից ոչ պակաս, մոխրի առկայությունը՝ 5-6%, ԳOUS 29053-91: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	1	Հուլիսի 3-ին
31	հատիկ պղպեղ	Ընտիրկամսովորականտեսակի:Անվտանգությունը, փաթեթավորումըևմակնշումը “Սննդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի:	տուփ	10	Հուլիսի 3-ին
32	աղացած	Համեմունք աղացած, խոնավությունը՝ 12%-ից ոչ	կգ	1	Հուլիսի 3-ին

	կարմիր պղպեղ	ավելի, եթերային յուղերը՝ 0.8%-ից ոչ պակաս, մոխրի առկայությունը՝ 5-6%, ԳOUS 29053-91: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի			
33	աղ	Կերակրի մանր աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀUS 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:	տուփ	15	Հուլիսի 3-ին
34	կակաո	Կակաոփոշի, գործարանայինարտադրության, չափածրարված: Անվտանգությունը, փաթեթավորումըևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված “Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի” և “Սննդամթերքիանվտանգությանմասին” ՀՀօրենքի 8-րդհոդվածի	կգ	2	Հուլիսի 3-ին
35	թեյ	Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: «Փունջ», բարձրորակ և I տեսակների, ԳOUS 1937-90 կամ ԳOUS1938-90: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	տուփ	10	Հուլիսի 3-ին
36	հանքային ջուր	պոլիէթիլենային տարայով 0,5լ, 30/62 (հանքայնացումը 3,9-4,8 գ/դմ^3) կամ 2/61 62 (հանքայնացումը 4,0-4,7 գ/դմ^3), կամ 1/00 (հանքայնացումը 4,2-5,2 գ/դմ^3), կամ 1/2001 (հանքայնացումը 3,2-4,7 գ/դմ^3) հորատանցքից, փաթեթավորումը՝ շշալցված տարողությամբ պոլիմերային նյութերից պատրաստված շշերում, ՀUS 191-2000: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 30-ի N 491-Ն որոշմամբ հաստատված «Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի», «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	12	Հուլիսի 3-ին
37	գինի	ՍպիտակԽաղողի սպիրտային խմորման ճանապարհով ստացված գինիներ ըստ արտադրության. բնական, էթիլային սպիրտի ծավալային մասը՝ չոր (9%-10%), չոր հատուկ (14%-16%), կիսաչոր (9%-13%), կիսաքաղցր (9%-12%), հատուկ, չոր (14%-20%), թունդ (17%-20%), կիսաաղանդերային (14%-16%), աղանդերային (15%-17%), ըստ որակի և հասունացման ժամկետի՝ երիտասարդ, առանց հասունացված տեսակավոր և հավաքածուական: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի և «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՀ օրենքի: Իջևան կամ համարժեք:	հատ	3	Հուլիսի 3-ին
38	ջեմ	1 կգ-անոց, ջեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի ՀUS 48-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	հատ	25	Հուլիսի 3-ին
39	ձու	Ձու սեղանի կամ դիետիկ, 1-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀUS 182-2012: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %	հատ	325	Հուլիսի 3-ին 125 հատ Հուլիսի 5-ին 100հատ Հուլիսի 8-ին 100 հատ
40	ալյուր	Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային	կգ	5	Հուլիսի 3-ին

		մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: ՀՍՏ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Բաղրամյան կամ համարժեք:			
41	թխվածքաբլիթ պերանիկ	Կաթնահունցշաքարահունց, խոնավությունը՝ 3-10, շաքարիպարունակությունը 20-27 տոկոս, յուղայնությունը՝ 3-30տոկոս	կգ	27	Հուլիսի 3-ին
42	խաչապուրի	Մեծ չափսի, շերտավոր խմորից, պանրով: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	400	Հուլիսի 3-ին 80 հատ Հուլիսի 8-ին 80հատ Հուլիսի 9-ին 80հատ Հուլիսի 13-ին 80հատ Հուլիսի 15-ին 80 հատ
43	հյութ	Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի թիվ 744-Ն որոշմամբ հաստատված «Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի», «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: 1լիտրանոց , տեղական կամ համարժեք :	հատ	100	Հուլիսի 3-ին
44	դափնուտերև	Չորացրած դափնետերևներ, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի, ԳՕՍՏ 17594-81: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	տուփ	3	Հուլիսի 3-ին
45	սալոր	Թարմ, առանցարտաքինվնասվածքների, տեղականարտադրության : ԳՕՍՏ 21921-76: Անվտանգությունընմակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի8-րդհոդվածի	կգ	40	Ըստ պահանջի
46	խնձոր	Թարմ, առանցարտաքինվնասվածքների, տեղականարտադրության : ԳՕՍՏ 21921-76: Անվտանգությունընմակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի8-րդհոդվածի	կգ	40	Ըստ պահանջի
47	բալ	Թարմ, առանցարտաքինվնասվածքների, տեղականարտադրության : ԳՕՍՏ 21921-76: Անվտանգությունընմակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի8-րդհոդվածի	կգ	20	Ըստ պահանջի
48	վիշնյա	Թարմ, առանցարտաքինվնասվածքների, տեղականարտադրության : ԳՕՍՏ 21921-76: Անվտանգությունընմակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի8-	կգ	40	Ըստ պահանջի

		րդհոդվածի			
49	դեղձ	Թարմ, առանցարտաքինվնասվածքների, տեղականարտադրության : ԳOUS 21921-76: Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի8-րդհոդվածի	կգ	40	Ըստ պահանջի
50	ծիրան	Թարմնքաղցր, տարբերտեսակի, միջինչափսերի, առանցարտաքինվնասվածքների, տեղականարտադրության : ԳOUS 21921-76: Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի8-րդհոդվածի	կգ	20	Ըստ պահանջի
51	ձմերուկ	Թարմ, առանցարտաքինվնասվածքների, տեղականարտադրության : ԳOUS 21921-76: Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի8-րդհոդվածի	կգ	50	Ըստ պահանջի
52	պաղպաղակ	Թզուկ տեսակի, Գրանդ Քենդի կամ համարժեք:	հատ	100	Հուլիսի 17-ին
53	թխվածքաբլիթ	Էքստրա:Կաթնահունց շաքարահունց, խոնավությունը՝ 3-10, շաքարի պարունակությունը 20-27 տոկոս, յուղայնությունը՝ 3-30տոկոս	կգ	13	Հուլիսի 3-ին
54	թխվածքաբլիթ	Ձեմով: Կաթնահունց շաքարահունց, խոնավությունը՝ 3-10, շաքարի պարունակությունը 20-27 տոկոս, յուղայնությունը՝ 3-30տոկոս	կգ	15	Հուլիսի 3-ին
55	կոտլետ	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Հավի մսից պատրաստված, փաթեթավորված, տուփի մեջ 5 հատ:	տուփ	125	Ըստ պահանջի
56	խնկյալի (պիլիմենների)	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Տավարի մսից, տուփով, տուփի մեր միջինում 20 հատ, մանր	տուփ	25	Հուլիսի 6-ին
57	արջի թաթ	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Ձեմով	հատ	180	Ըստ պահանջի
58	կեքս	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	100	Ըստ պահանջի
59	բուլկի	Դրոժով, բարձր տեսակի ալյուրից, 50գ բաժիններով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքիանվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի շոկոլադե:	հատ	180	Ըստ պահանջի
60	բուլկի	Դրոժով, բարձր տեսակի ալյուրից, 50գ բաժիններով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքիանվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածիջեմով	հատ	90	Ըստ պահանջի
61	բուլկի	Դրոժով, բարձր տեսակի ալյուրից, 50գ բաժիններով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքիանվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի չամիչով	հատ	180	Ըստ պահանջի
62	բուբլիկ	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	10	Հուլիսի 3-ին
63	պոնչիկ	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	180	Ըստ պահանջի
64	խտացրած կաթ	Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ	հատ	38	Հուլիսի 3-ին

		պակաս, թթվայնությունը՝ 48 0Т-ից ոչ ավելի, պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի			
65	սուրճ	Բնական բոված, դարչնագույն փոշի, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տտիպ և այլն), բույրը նուրբ և վառ արտահայտված առանց կողմնակի համի և հոտի, խոնավության զանգվածային մասը՝ թողարկման ժամանակ՝ 4 %-ից ոչ ավելի, պահման ժամկետի ընթացքում՝ 7%-ից ոչ ավելի: Կոֆեինի զանգվածային մասը հատիկավոր և աղացած սուրճում՝ 0,7%-ից ոչ պակաս, աղացվածքի մեծությունը՝ N 095 մաղով անցնող սուրճ 98,5%-ից ոչ պակաս «թուրքական» սուրճի համար և 90,0 %-ից ոչ պակաս մնացած սուրճերի համար: Կողմնակի խառնուկների ներկայություն չի թույլատրվում: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Jambo կամ համարժեք	կգ	1	Հուլիսի 3-ին 0.5կգ Հուլիսի 10-ին 0.5կգ
66	տոմատի մածուկ	0.5 կգ: Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ, ԳՕՍ 3343-89: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	10	Հուլիսի 3-ին
67	կաթնաշոռ	Կաթնաշոռ 18 և 9,0% յուղիպարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 0Т, փաթեթավորվածսպառողականտարաներով, անվտանգությունընմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Նորոշմամբհաստատված «Կաթին, կաթնամթերքինևդրանցարտադրությանըներկայացվող պահանջներիտեխնիկականկանոնակարգի» և «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի:	հատ	15	Ըստ պահանջի
68	թթվասեր	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0Т, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %,450 գրամանոց	հատ	30	Ըստ պահանջի
69	մածուն	Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000Т,: անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: 1 կգ-անոց	հատ	18	Ըստ պահանջի
70	հավի բդիկ	Մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳՕՍ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված«Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի8-րդ հոդվածի	կգ	45	Հուլիսի 9-ին 20կգ Հուլիսի 11-ին 25կգ
71	հավի բուդ	Մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի	կգ	24	Հուլիսի 6-ին

		հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, ԳՕՍՏ 25391-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված«Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի8-րդ հոդվածի			8կգ Հուլիսի 10-ին 8կգ Հուլիսի15-ին 8կգ
72	նրբերշիկ	Բարձր տեսակի, պատրաստված տավարի և խոզի կամ տավարի և հորթի մսերից, ԳՕՍՏ 23670-79: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:<<Բարի Սամարացի >> կամ համարժեք	կգ	30	Ըստ պահանջի
73	վետչինա	ԳՕՍՏ 16351-86-վակուումային փաթեթավորմամբ մինչև 0.5 կգ ձողիկներով, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Նախապես կտրտված 10գրամանոց կտորների , <<Բարի Սամարացու>> դասական կամ համարժեք:	կգ	4	Ըստ պահանջի
74	երշիկ	Երշիկ սերվելատ<<Բարի Սամարացի>> կամ համարժեք, նախապես կտրտված 10 գրամանոց կտորների	կգ	4	Ըստ պահանջի
75	հոթդոգ	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, նրբերշիկով:	հատ	180	Ըստ պահանջի
76	երշիկ	Եփած երշիկ բժշկական, <<Բարի Սամարացու>> դասական կամ համարժեք, նախապես կտրտած	կգ	6	Ըստ պահանջի
77	հացիկ	Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի,կլոր փոքր չափերի, փաթեթավորված տուփերում, տուփի մեջ 10 հատ:	տուփ	50	Հուլիսի 9-ին 25տուփ Հուլիսի 13-ին 25 տուփ
78	շոկոլադես ալիկ	Շոկոլադե սալիկ մեդալանման, փոքր չափսի, golden coins	հատ	40	Հուլիսի 3-ին
79	շոկոլադես ալիկ	Շոկոլադե սալիկ մեդալանման, մեծ՝տրամագիծը ոչ պակաս 70մմ-ից, վրան գրված 1 euro	հատ	40	Հուլիսի 3-ին
80	սխտոր	Թարմ, տեղականարտադրության, անվտանգությունը՝ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբհաստատված, Թարմպտուղբանջարեղենիտեխնիկականկանոնակարգիև «Սննդամթերքիանվտանգությանմասին» ՀՀօրենքի 8-րդհոդվածի	կգ	1	Հուլիսի 3-ին
81	շոկոլադե բոմբոներկա	Նեսթլե Կլասիկ շոկոլադե կոնֆետների ընտրանի կաթնային կաթնային շոկոլադից, պարունակում է՝՝ անտառային ընկույզ, կակաոյի փոշի, յուղ, գրիլյաժի և վաֆլիի փշրանքներ, տեղադրված՝ ձևավոր տուփերում: ԳՕՍՏ 6534-89: Քաշը՝ 158գ	հատ	2	Հուլիսի 3-ին

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿԱՏԱՐՈՂ

Հավելված թիվ 2
<<>> --------2014 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/2-14/4>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Սնունդ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Մատակարարման ժամկետը
1				
2				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված թիվ 3
<<>> ---------- 2014 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/2-14/4>>
ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Սնունդ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Վճարման ենթակա գումարը /դրամ/	Վճարման ժամկետը
1			Ըստ մատակարարման
	Ընդամենը		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հավելված թիվ 4
<<>> -------- 2014 կնքված
N <<ՎՊՀ -ՇՀԱՊՁԲ-11/2-14/4>>
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող Պատվիրատու

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N_____
ՀԱՆՁՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> 2014թ.

Պայմանագրի համարը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝<<->> ------ 2014թ:Պատվիրատուն՝Վանաձորի Պետական համալսարանն ի դեմս ռեկտոր Գ.Խաչատրյանի:Կատարողն՝ ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված ստորև նշված աշխատանքները,մատակարարումների ծառայությունները /այսուհետև աշխատանքների/համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին-գնման ժամանակացույցին,կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը << >> 2014թ-ից մինչև <<-->> _____ 2014թ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազ.դր)	Վճարման ժամկետը

Վերոհիշյալ աշխատանքների վերաբերյալ բոլոր հաշիվ ապրանքագրերը հանդիսանում են արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց Աշխատանքը ընդունեց

_____ _____

(ստորագրություն) (ստորագրություն)